

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական կոմիտե)՝ որպես քննչական մարմնի, կազմավորման, գործունեության, դրանում ծառայության անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և ծառայության հետ կապված մյուս հարաբերությունները:

(1-ին հոդվածը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **քննչական կոմիտեում ծառայություն**՝ պետական ծառայության հատուկ-տեսակ, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով.

2) **քննչական կոմիտեի ծառայող քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ**՝ քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների պետերը և նրանց տեղակալները, բաժնի պետերը, բաժնի պետի տեղակալները, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները և քննիչները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող ծառայողները, ովքեր «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք:

(2-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 5. Քննչական կոմիտեի ներկայացուցչի մասնակցությունը գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին

1. Քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, իսկ նրանց հանձնարարությամբ՝ քննչական կոմիտեի այլ ծառայողներ ինքնավար պաշտոն զբաղեցնողներ գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հանցավորության հարցերին վերաբերող նիստերին կարող են մասնակցել այդ մարմինների հրավերի հիման վրա:

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 6. Քննչական կոմիտեի լիազորությունները

1. Քննչական կոմիտեի լիազորություններն են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս քննչական կոմիտեն կարող է ձևավորել տեղեկատվական շտեմարաններ, որոնք օգտագործում է բացառապես իր լիազորություններն իրականացնելիս օրենքով սահմանված պահանջները պահպանելով:

Հոդված 7. Քննչական կոմիտեի ինքնուրույնությունը, նրա ծառայողների-ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը

1. Քննչական կոմիտեի ծառայողն-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն օրենքին:
2. Քննչական կոմիտեի ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի լիազորությունների իրականացմանը միջամտելն արգելվում է:

Հոդված 8. Քննչական կոմիտեի գործունեության հրապարակայնությունը

1. Քննչական կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և ծառայողական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը:
2. Քննչական կոմիտեն յուրաքանչյուր տարի հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին:
3. Քննչական կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ~~հունվարի 31-ը~~ ապրիլի 1-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ քննչական կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին:
(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 9. Քննչական կոմիտեի ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի պահանջների կատարման պարտադիրությունը

1. Քննչական կոմիտեի ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լիազորություններից բխող պահանջները ենթակա են կատարման:
2. Հանրային ծառայողի կողմից քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի լիազորություններից բխող պահանջները չկատարվելու դեպքում քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալը տվյալ ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է նման լիազորություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին:

Հոդված 10. Քննչական կոմիտեում ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Քննչական կոմիտեի ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:
2. Քննչական կոմիտեի ծառայողը-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:
Քննչական կոմիտեի ծառայողը-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Հողված 11. Քննչական կոմիտեի համակարգը

1. Քննչական կոմիտեի համակարգը ներառում է քննչական կոմիտեի կենտրոնական մարմինը, զինվորական քննչական գլխավոր վարչությունը, Երևան քաղաքի քննչական վարչությունը, մարզային քննչական վարչությունները, ինչպես նաև քննչական կոմիտեի դեպարտամենտը:

2. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներն են կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունները, կենտրոնական մարմնի վարչությունները և կենտրոնական մարմնի բաժինները, աջակցող մասնագիտական վարչությունները և աջակցող մասնագիտական բաժինները: Ջինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունները, կայազորային քննչական բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները: Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները: Մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են մարզային քննչական վարչության տարածքային բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները: Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ենթաստորաբաժանումներն են գլխավոր վարչությունների վարչությունները:

3. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության և զինվորական քննչական գլխավոր վարչության պետերն ի պաշտոնե քննչական կոմիտեի նախագահի տեղակալներն են:

4. Քննչական կոմիտեի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը ապահովում է քննչական կոմիտեի դեպարտամենտը:

5. Քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

5. Քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման աշխատողները և գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը:

6. Քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը ինչպես նաև քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը հաստատում է Կառավարությունը:

(11-րդ հոդվածը խմբ. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հողված 12. Քննչական կոմիտեի նախագահը

1. Քննչական կոմիտեի նախագահը ղեկավարում և վերահսկում է քննչական կոմիտեի գործունեությունը և պատասխանատու է քննչական կոմիտեի լիազորությունների իրականացման համար:

2. Քննչական կոմիտեի նախագահը՝

1) սահմանում է քննչական կոմիտեի ծառայողների կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց կողմից նախաքննության արդյունավետության, այդ թվում՝ դրա պատշաճ կազմակերպման ուղեցույցները և ապահովում դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև.

3) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ).

4) ներկայացնում է քննչական կոմիտեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ հարաբերություններում.

5) հաստատում է քննչական կոմիտեի կառուցվածքը, հաստիքացուցակը և քննչական կոմիտեի դեպարտամենտի կանոնադրությունները.

6) խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում քննչական կոմիտեի ծառայողներին կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց, պարզևատրում է քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց.

6.1 դիմում է գլխավոր դատախազին՝ դատախազի նկատմամբ ժառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ.

7) քննչական կոմիտեի խնդիրների իրականացման, քննչական կոմիտեի ժառայողների կոմիտեում հնրնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ սահմանելով դրանց գործունեության կարգը.

8) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:
(12-րդ հոդվածը խմբ. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 13. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը

1. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) համակարգում է քննչական կոմիտեի նախագահի կողմից իրեն հանձնարարված ոլորտի աշխատանքները.

1.1.) կատարում է աշխատանքի բաժանում իր համակարգման ներքո գտնվող քննչական ստորաբաժանումներում քննիչների միջև.

2) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ).

3) միջնորդություններ է ներկայացնում քննչական կոմիտեի ժառայողներին քննչական կոմիտեում հնրնավար պաշտոն զբաղեցնող անձանց խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

4) քննչական կոմիտեի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով փոխարինում է քննչական կոմիտեի նախագահին: Նման հրամանի բացակայության դեպքում քննչական կոմիտեի նախագահին ժամանակավորապես փոխարինում է քննչական կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը.

5) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:
(13-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 15. Քննչական կոմիտեի կարգապահական և որակավորման հանձնաժողովները

1. Քննչական կոմիտեում գործում են կարգապահական և որակավորման հանձնաժողովներ:

2. Կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից: Հանձնաժողովի կազմում են քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, քննչական կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ժառայող քննիչ և Կառավարության նշանակած չորս ներկայացուցիչ: Կարգապահական հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով և չեն կարող միաժամանակ լինել որակավորման հանձնաժողովի անդամներ: Կարգապահական հանձնաժողովում նոր անդամների նշանակումները սույն հոդվածի սույն մասով սահմանված կարգով կատարվում են կարգապահական հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը:

3. Կարգապահական հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի կազմում ընդգրկված կոմիտեի նախագահի տեղակալը:

4. Կարգապահական հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

4.1. Կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանում է կարգապահական հանձնաժողովը՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5. Որակավորման հանձնաժողովը կազմված է 9 անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմում են քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, քննչական կոմիտեի 4 ժառայող քննիչ, 4 իրավաբան-գիտնական:

6. Որակավորման հանձնաժողովի անդամներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ 3 տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովի նոր անդամներին քննչական կոմիտեի նախագահը նշանակում է որակավորման հանձնաժողովի գործող անդամների լիազորությունների դադարեցման օրը:

7. Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է քննչական կոմիտեի նախագահի տեղակալը:
(15-րդ հոդվածը խմբ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ՔՆՆՉԱԿԱՆ ԿՐՄԻՏԵՐՈՒ ՑԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՄԻՏԵՒ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՒՆԵՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՐՄԻՏԵՐՈՒ ԻՆՔՆԱԿԱՐ ՊԱՇՏՈՆ ԶՐԱԴԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ, ՂԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ
(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 16. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի պաշտոնները

1. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

- 1) բարձրագույն պաշտոններ.
- 2) գլխավոր պաշտոններ.
- 3) առաջատար պաշտոններ.
- 4) կրտսեր պաշտոններ:

2. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի պաշտոնների յուրաքանչյուր խումբ դասակարգվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի:

3. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

4. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի բարձրագույն խմբի պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

- 1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի նախագահ.
- 2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ.
- 3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետում նշված պաշտոնների), հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ:

5. Քննչական կոմիտեում ծառայության կոմիտեի գլխավոր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ, մարզային քննչական վարչության պետ.

2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետ, մարզային քննչական վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ, մարզային քննչական վարչության քննչական բաժնի պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

6. Քննչական կոմիտեում [ժառայության կոմիտեի](#) առաջատար պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության բաժնի պետի տեղակալ.

3) 3-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, մարզային քննչական վարչության ավագ քննիչ:

7. Քննչական կոմիտեում [ժառայության կոմիտեի](#) կրտսեր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, մարզային քննչական վարչության քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի քննիչ:

(16-րդ հոդվածը խմբ. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 17. [Քննչական կոմիտեի ժառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող հիմնական պահանջները](#)

1. Քննչական կոմիտեում [ժառայության կարող է անցնել պաշտոնի կարող է նշանակվել](#)

Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է հայերենին.

3) չունի [քննչական կոմիտեի ժառայողի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի](#) պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն (որոնց ցանկը սահմանում է Կառավարությունը).

4) ընդգրկվել է [քննչական կոմիտեի ժառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակում [բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների](#):

2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ այդ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև օրենքով նախատեսված կարգով [ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք](#):

3. Քննչական կոմիտեում [ժառայության չի կարող անցնել պաշտոնի չի կարող նշանակվել](#) այն քաղաքացին՝

1) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ձանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

4) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ առկա է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

6) որը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

4. Քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է 60 տարեկանը: Սահմանային տարիքը լրանալուց հետո քննչական կոմիտեի նախագահը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել [ծառայության պաշտոնավարման](#) ժամկետը:

5. Քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալի պաշտոնի սահմանային տարիքը 65 տարեկանն է, որը համապատասխանաբար Կառավարության և վարչապետի կողմից կարող է երկարաձգվել մինչև 2 տարի ժամկետով:

(17-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ս)

Հոդված 18. [Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակը

1. [Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակը համալրում է քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովը՝ ~~տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին առնվազն տարին մեկ անգամ:~~

2. [Քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում](#) լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է ~~անցկացվել հավակնորդների լրացուցիչ որակավորման ստուգում:~~

3. Որակավորման հանձնաժողովը [քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն՝ [քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները, վայրը, որակավորման ~~գրավոր քննության օրը գրավոր և բանավոր քննության օրերը~~, համալրման ենթակա տեղերի քանակը:

4. [Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց](#) թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը ներկայացնում է՝

1) անձը հաստատող փաստաթուղթ.

2) բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթուղթ.

3) կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իրավաբանի մասնագիտություն ձեռք բերելուց հետո իր մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները).

4) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է).

5) քննչական կոմիտեում [ծառայությանը պաշտոն զբաղեցնելուն](#) խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ:

5. Հայտատուն իրավունք ունի ներկայացնելու նաև երաշխավորագիր-նամակներ:

6. Հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, և դրանք ենթակա են վերադարձման որակավորման հանձնաժողովի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. [Որակավորման հանձնաժողովը ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները, ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված այլ պահանջներին:](#)

7. [Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որից դրական գնահատական ստանալուց հետո նաև բանավոր քննություն:](#)

Գրավոր և բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ:

Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը և լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Դրական գնահատական ստացած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

8. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ընդգրկվում են քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում:

8. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն 3 տարի ժամկետով ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում: Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածում անձը երկու անգամ ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ ստանալու և դրանից հրաժարվելու դեպքում հանվում է թեկնածությունների ցուցակից:

Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում, անձը կարող է դիմել որակավորման հանձնաժողովին իր գործնական և տեսական ունակությունները ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը ևս 3 տարի ժամկետով շարունակում է ընդգրկված մնալ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում:

9. Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիր են անցնում և հանձնում որակավորման քննություն: Ուսումնառությունը չանցած անձը հանվում է քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

10. Անձն ազատվում է ուսումնառությունից, եթե՝

1) ունի դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի կամ

2) իրավաբանական գիտությունների դոկտոր է կամ

3) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

11. Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ որակավորման հանձնաժողովը կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը:

12. Որակավորման հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան՝ որոշումը ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում: Դատարանը գործը քննում և լուծում է այն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Որակավորման հանձնաժողովի՝ հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելը չի կասեցնում հայտերի ընդունման և քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակը կազմելու՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգը: Որակավորման հանձնաժողովի՝ հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հայտատուի հայտը քննարկում է որակավորման հանձնաժողովը:

(18-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 19. Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակը

1. Քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակը ձևավորում է որակավորման հանձնաժողովը՝

1) քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հերթական ատեստացիայի ժամանակ.

2) արտահերթ կարգով, երբ քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ քննչական կոմիտեի ծառայողի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ծառայողական բնութագիր: Քննչական կոմիտեի ծառայողն քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին ընդգրկվում է ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.

3) այն դեպքերում, երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվում է 5 տարի ժամկետով:

Հոդված 20. Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում:

3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է վարչապետը:

5. Կառավարությունը և վարչապետը համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

6. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների և բաժինների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, բաժինների և կայազորային քննչական բաժինների, Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների, մարզային քննչական վարչությունների բաժինների կազմում գործող քննիչներին պաշտոնի է նշանակում քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք, ավարտելով ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ սույն օրենքով սահմանված կարգով ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեի ծառայողների քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից:

7. Քննչական կոմիտեի մյուս ծառայողներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակից:

8. Քննչական կոմիտեի նախագահը սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում նշված քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

(20-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 21. Քննչական կոմիտեի ծառայողի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի երդումը

1. Քննչական կոմիտեում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձինք քննչական կոմիտեի նախագահի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության դրոշի առջև տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ես (անուն, հայրանուն, ազգանուն), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում պաշտոն ստանձնելով, երդվում եմ՝

հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հանցավոր ոսնձգություններից պաշտպանել սահմանադրական կարգը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հասարակական կարգն ու անվտանգությունը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները»:

2. Քննչական կոմիտեի ծառայողը-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը երդում տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Քննչական կոմիտեի ծառայողն-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

Հոդված 22. Քննչական կոմիտեի ծառայողին-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելը
(վերնագիրը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն)

1. Քննչական կոմիտեի ծառայողը-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) իր գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարաձգվել.

4) հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեի ծառայողին-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր-ծառայության աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը:

2. Քննչական կոմիտեի ծառայողը-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից ազատվում է՝

1) նրա նկատմամբ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում.

2) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

3) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

4) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

5) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում.

6) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.

7) նրա՝ սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում:

(22-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 22.1. Քննչական կոմիտեի ծառայողների-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կարգերի ռեզերվը

1. Քննչական կոմիտեի ծառայողները քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք գրանցվում են կադրերի ռեգերվում հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի մարմնի կամ ստորաբաժանումների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեի ծառայողին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնները քննչական կոմիտեի ծառայողին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին առաջարկվում են ըստ հերթականության:

3. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կադրերի ռեգերվում գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան սույն օրենքով սահմանված՝ քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը, իսկ ծառայության ժամկետը սույն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև երկարաձգված ժամկետը լրանալը:

4. Եթե քննչական կոմիտեի կադրերի ռեգերվում գտնվող անձն իր դիմումի համաձայն հանվում է ռեգերվից, ապա նրա ստաժը հաշվարկվում է կադրերի ռեգերվում փաստացի գտնվելու ժամանակահատվածին համապատասխան:

5. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կադրերի ռեգերվում գտնվելու առաջին երկու ամիսների համար վճարվում է նրանց զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Քննչական կոմիտեի ծառայողին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին իր դիմումի հիման վրա երկու ամսից շուտ կադրերի ռեգերվից դուրս գալու դեպքում վճարումն իրականացվում է կադրերի ռեգերվում գտնվելու փաստացի ժամանակահատվածին համապատասխան:

6. Սույն օրենքի հիման վրա քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կադրերի ռեգերվում գրանցելու և կադրերի ռեգերվից հանելու կարգը հաստատում է քննչական կոմիտեի նախագահը:

(22.1-ին հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 23. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դասային աստիճանները
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

1. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվում են հետևյալ դասային աստիճանները.

- 1) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական.
- 2) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական.
- 3) արդարադատության առաջին դասի խորհրդական.
- 4) արդարադատության երկրորդ դասի խորհրդական.
- 5) արդարադատության երրորդ դասի խորհրդական.
- 6) առաջին դասի խորհրդական.
- 7) երկրորդ դասի խորհրդական.
- 8) երրորդ դասի խորհրդական:

2. Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի և արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները բարձրագույն դասային աստիճաններ են, որոնք շնորհվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մյուս դասային աստիճանները շնորհում է քննչական կոմիտեի նախագահը:

4. Քննչական կոմիտեի ծառայողներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դասային աստիճանները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

5. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում քննչական կոմիտեի ծառայողը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը կարող է զրկվել քննչական կոմիտեում ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:

(23-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 24. [Քննչական կոմիտեի ծառայողների Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց](#) պաշտոններին համապատասխանող դասային աստիճանները
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

1. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի:
2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության առաջին դասի խորհրդականի:
3. Բարձրագույն պաշտոնի երրորդ ենթախմբի և զլխավոր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երկրորդ դասի խորհրդականի:
4. Չլխավոր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երրորդ դասի խորհրդականի:
5. Առաջատար պաշտոնի առաջին և երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երրորդ դասի դասային աստիճանն է:
6. Առաջատար պաշտոնի երրորդ ենթախմբի և կրտսեր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն առաջին դասի խորհրդականի դասային աստիճանն է:
7. Կրտսեր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է:
8. Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելիս նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվում է [քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի](#) դասային աստիճանին: Ջինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված դասային աստիճաններին սահմանում է Կառավարությունը:
(24-րդ հոդվածը խմբ. 17.01.18 ՀՕ-79-Ն, 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 25. [Քննչական կոմիտեի ծառայողների Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց](#) դասային աստիճանների շնորհման ժամկետները
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

1. Երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը սկզբնական դասային աստիճան է և շնորհվում է քննչական կոմիտեում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի: Քննչական կոմիտեում մյուս պաշտոններում նշանակվելիս [քննչական կոմիտեի ծառայողին-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց](#) շնորհվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված՝ տվյալ պաշտոնին համապատասխանող նվազագույն դասային աստիճանը:
2. Եթե սույն օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում այն ավելի բարձր է [քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձի](#) տվյալ պաշտոնին նշանակվելու համար սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված առավելագույն դասային աստիճանից, ապա շնորհվում է տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան:
3. [Քննչական կոմիտեի ծառայողներին-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն գրադեցնող անձանց](#) դասային աստիճանները շնորհվում են հերթականության կարգով գրադեցրած պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանի սահմաններում նախորդ դասային

աստիճանում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական դասային աստիճանների շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- 1) երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 2 տարի.
- 2) երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.
- 3) առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.
- 4) արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 4 տարի.
- 5) արդարադատության երկրորդ դասի դասային աստիճան ունեցողի համար՝ 5 տարի:

5. Արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողին բարձրագույն դասային աստիճան շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

6. Նախորդ դասային աստիճանը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ դասային աստիճանը շնորհելու մասին իրավական ակտն ստորագրելու հաջորդ օրվանից, իսկ սույն օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում՝ զինվորական կամ այլ հատուկ կոչման շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից:

7. Առեստավորումը սույն օրենքով սահմանված կարգով հետաձգվելու և վերապատրաստման գործուղվելու, կարգապահական տույժ ունենալու, [քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի](#) լիազորությունները կասեցնելու կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցված լինելու դեպքերում հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է:

8. Հերթական դասային աստիճանի շնորհման հետաձգման՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերը վերանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, [քննչական կոմիտեի ծառայողին-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին](#) շնորհվում է հերթական դասային աստիճանը:

(25-րդ հոդվածը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5

[ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ՉԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ](#)

Հոդված 26. [Քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի ծառայողական իրավունքները](#)

1. [Քննչական կոմիտեի ծառայող-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն](#) իրավունք ունի՝

- 1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերի, ինչպես նաև ներկայացնելու պարզաբանումներ.
- 2) սահմանված կարգով ստանալու ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.
- 3) ստանալու օրենքով նախատեսված վարձատրություն, հավելավճարներ և այլ վճարներ.
- 4) սահմանված կարգով մասնակցելու ծառայողական առաջխաղացմանը և ստանալու իր պաշտոնին համապատասխանող ավելի բարձր դասային աստիճան.
- 5) սահմանված կարգով վերապատրաստվելու պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.
- 6) ներկայացնելու առաջարկություններ քննչական կոմիտեի գործունեության կատարելագործման վերաբերյալ:

(26-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

Հոդված 27. [Քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի ծառայողական պարտականությունները](#)

1. Քննչական կոմիտեի ծառայող-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է՝

- 1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.
- 2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- 3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.
- 4) իր գործունեության ժամանակ պահպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը.
- 5) պահպանել ծառայողական կարգապահությունը.
- 6) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու համար սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

7) քննչական կոմիտեի նախագահի սահմանած կարգով իրականացնել հերթապահություն:
2. Քննչական կոմիտեի ծառայող-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:
(27-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն)

Հոդված 28. Քննչական կոմիտեի ծառայողի Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-311-Ն)

1. Երկարամյա ծառայության երկարամյա պաշտոնավարման, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու և առանձնակի ցուցանիշների համար քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) միանվագ դրամական պարգևատրում.
- 3) հուշանվերով պարգևատրում.
- 4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում.
- 5) արտահերթ դասային աստիճանի շնորհում.
- 6) տվյալ պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանի վերին սահմանից մեկ աստիճան բարձր դասային աստիճանի շնորհում.
- 7) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում:

2. Քննչական կոմիտեի ծառայողի-Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ ծառայության պաշտոնավարման ամբողջ ընթացքում կարող են կիրառվել մեկ անգամ:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսման միջոցները քննչական կոմիտեի ծառայողի-քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերի:

